

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

51^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 48

Գ. ՇՐՋԱՆ

30 ՆՈՅԵՄԲ. 1902

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մասիս շաբաթերի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար Բաժանուն ՊՂ. եւ գաւառներուն համար ՅԵժանուն ՊՂ., կանխիկ վճարելի: Արտատպան 12 ֆրանկ կամ 5 ռուբլի: Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն շրջանաւոր: Բաժանորդագրութիւնները կը սկսին աւիտ ամսոյ մէկէն: Մասիս հրատարակ կ'ըլլէ աւիտ շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է խնդրէ ինքնուրոյն խմբագրութեան: Ժամանակ անցնելի վերջ՝ աշտ տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն տնոյիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده آغوب ماطيوسيان مطبعه سنده «ماسيس» غزته سي اداره سته

ԽՄԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Տպարան Յ. Մատթէոսեան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Rédaction de la Revue MASSIS

Imprimerie H. Matteosian

CONSTANTINOPLE

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Գնդ. Տոբ. Աղեփանգը Պէյ Արապեանց այս անգամ իր բնակութիւնը հաստատած է Բերա, Թարլա-Պաշի քիւ 121, ուր կը գրեցնուի առաւօս եւ երեկոյ: Իսկ կէս օրուան միջոցները, ուրբաթ եւ կիրակիէ՝ զատ, կը գտնուի Պահնէ-Գաբու, Միմասեանց դէղարանը:

4—10

ՏՈՒԹ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՐ

Կերտնասեղի Մասքոսեան Տպարան
Ֆինանսները, Կ. Պոլիս

Գիտական շարժում Ա. Տարի (1885) (Սպառած): — Գիտական շարժում Բ. Տարի (1886) 20 դրշ: — Գիտական շարժում Գ. Տարի (1887) 20 դրշ: — Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կենդ. Հիւսուածարանութիւն եւ Մարդկային կազմախօսութիւն ու Բնախօսութիւն, Դասագիրք երկրորդական վարժարանաց): 40 դրշ: — Նախորդին համառոտը. Դասագիրք Նախակրթարանաց: 8 դրշ: — Ուսումնասիրութիւն միջային քաղաքացիական պատճառարանութեան եւ կազմութեան վրայ (Ֆրանսերէն) 10 դրշ: — Ծագումն հայ տառից (Պատկեալ Բզմիրահանց

մրցանակա) 10 դրշ: — Մանրէարանութիւն 10 դրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Ֆրանսերէն) 10 դրշ: — Գրիգոր Ազարթն (Ծագում եւ կենսագրութիւն) 2¹/₂ դրշ: — Առողջապահութիւն: 25 դրշ: — Մշակութան գործարանը (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն) 6 դրշ: — Մարդկային Ստատիստիկութիւն: 5 դրշ: — Բառացուցակ Ախտանունաց (Բ. Տիպ) 3 դրշ: — Տարուինակութիւն (Գ. Տիպ) 3 դրշ: — Տիեզերք եւ իր կազմութիւնը (Հայ. Թարգմանութիւն) 10 դրշ:

4—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսէին դէմ

Դե. Եւ. Շբ. օրերը առաւօսեան կանուխէն մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂

Բե. Դե. Ուր. օրերը 6 էն մինչեւ 11¹/₂

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ԶԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ԶԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքիօն»ի ապահովագրելոյ կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼԻ ԱՐԵՒԵԼԻՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքիօն ապահովագրողը ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեւամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆՔԱՆ Թուրքիոյ եւ Արեւելի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, Օսմ. Պանփային դիմացը
Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

ՄԱՍԻՆ

51^{րդ} ՏԱՐԻ

— 30 ՆՈՅԵՄԲԵՐ 1902 —

ԹԻԻ 48

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աճառնիս Երամ (Ինքըրվու մը) Օ. ՉԻՖԹԷ.ՍՍԵՐԱՅ: — Աճառնուդ (Բանաստեղծութիւն) Մ. Ա. ՃԷՄԵՍԷ: — Աճառն. ՓՍԵԼԱԿ: — Տուրիս Բաւման (Պատիկ Երկեր) ԽՈՍՐՈՎ. ԲԷՇԵԿԵՍԷ: — Նախական տառնուրիւններ. ԳԵՂԱՄ: — Լաւուրէլա (Վեպ) ԲՍՈՒՂ. ՀՍԵՅԷ: — Յուշապատ:

ԱՐՄԱՆՏՈ ԵՐԱՄ

(ԻՆԹԵՐՎԻՅՈՒ ՄԸ)

Դեռ շնորհաւոր եղած տառնա, Պօլիսէն չատ
աղնիւ ու սիրելի բարեկամներէս մէկը, որ
աւարտութեանս մէկ մասին ընկեր ալ եղած
ինծի եւ որ Իտալիա ապրած է տարինե-
ով, իր նամակներէն մէկուն մէջ, Իտալիոյ
կայ շատ մը տեղեկութիւններէ զատ հե-
տեւաւր կը գրէր .

« . . . Եթէ Բիգա իջնաք, զանց մի՛ ընէք
Լիւօնոս ալ անցնիլ, որ ժամ մը միայն հե-
տէ, ուր հայ հոգաբարձութիւն մը կայ եւ
այնպէս եկեղեցի ու եկեղեցատուն մըն ալ
ունինք : Ժողովրդապետ Գեր. Պահապանեան
կարգապետն պիտի կրնաք առնել հասցէն
Ֆիրէնցէ գտնուող հայազգի բժիշկի մը, զոր
պաշտօնէն ձեր Ֆիրէնցէն անցած պահուն,
մերեւս պարտք մը նկատէք եւ հաճոյք մըն
ալ ըլլայ ձեզի միանգամայն : Գիտնալով որ
լաւագորգութիւն եւայն . . . » :

Բայց դժբաղդութիւնը հոն է որ, Բիգա
նալով հանդերձ, չի կրցայ Լիւօնոս անց-
նիլ, զանազան պատճառներով, եւ միտքովս
պատճարած էի՝ Ֆիրէնցէի հայազգի բժիշկը
պաշտօնէն բազմաւորութեան, Թերեւս ինք
քիչ չի պիտի հրճուէր, տեսնելով ազգա-
պետներ որոնք իր բնակած քաղաքէն անցած
տառնին, կուգան իրենց յարգանքը յայտնել
ուն : Բայց, Ֆիրէնցէի պէս մեծկակ ու

օտար ազգութիւններու վրայ գաղափար չու-
նեցող բնակիչներով լեցուն քաղաքի մը մէջ,
հարցնելով վնասելով, Հայ մը գտնելը,
յուսալը իսկ աղայութիւն մը սեպելէ հետեւ
չէի :

Տասնըհինգ օր մը պիտի կենայի հոն եւ
հակառակ ակնկալութեանս, ժամերու լաւ
բաժանումով մը եւ օգերուն բացառիկ կեր-
պով խիստ գեղեցիկ ըլլալուն շնորհիւն ալ
անշուշտ, ժիր, անխոնջ ու անդուլ, գիշե-
րով, ցորեկով, պատկելով, վազվառելով,
այցելելով, զիտելով, ուսումնասիրելով,
տասը օրուան մէջ գրեթէ բան չի մնաց որ
տեսած չըլլամ, Ֆիրէնցէի — Արուեստնե-
րու այդ մայրաքաղաքին — մէջ, փողոց,
հրապարակ, հանրային պարտէզներ, թան-
գարան, եկեղեցի, բանօրամա, գերեզման-
ոց, շրջականներ, ցուցահանդէս, անտառ-
ներ, հետաքրքրաշարժ տեղուանք եւ վերջա-
պէս ինչ որ կայ, օտարազգիի աչքը ու միտքը
հրահրող ու հրացնող : Դեռ հինգ օր ունէի
ուրեմն եւ ուրիշ բան չէր մնար ինձ ընել,
բայց եթէ պարտաւ շրջապատ կամ արդէն տե-
սած բաներս ու տեղուանքս անգամ մըն ալ
աչքէ անցնել, Այն ատեն հայազգի Տօքթորը
նորէն միտքս ինկաւ : Եւ այս անգամ կը
զգայի որ տեսակ մը պարտականութիւն կը

բռնագողութիւններ վրաս : Լիվօրնո չի կրնալ երթալուս զփառանհոլթիւնը թերեւս կարենայի փոխարինել անապատելի յաջողութիւնով մը : Ամէն պարագայի մէջ, պէտք էի աշխատիլ զայն գտնելու, նոյն իսկ եթէ զուր տեղը ըլլար ան, քանի որ ժամանակ ունէի դեռ եւ քանի որ հաճոյքէ զատ, ոչինչ չլիար չիկար ատոր ծայրը :

Անմիջապէս մէկ քանի ղեկարաններ կը մտնեմ, Տօքթօր մը, ղեկարանէ աւելի ո՞ւր յարմարութիւն կառնէ փնտռել : Ոչ ոք բան մը զիտէ սակայն : Մանաւանդ որ գտնէ ահաւորապէս յուսալից, կը մտնեմ Միջագոյսի շրջանը, որ քաղաքին է՛ն կեդրոն եւ է՛ն նշանաւոր ղեկարանն է : Միջագոյսի ըլլալէն ետքը, հայ բժիշկն ալ ճանչնալու է, կըսեմ ինքնիւրեմս :

— Ա՛հ... Այո՛, այո՛, գիտեմ, կըսէ տէրը : Կը ճանչնամ ուսու բժիշկ մը, որուն հասցէն, եթէ վայրկեան մը կը ներէք ինձ սպասցնել ձեզ, տամ հիմայ... :

— Կը ներէք, հայ բժիշկ մը, չէ թէ ուս :

— Ի՞նչ, կը բացազանչէ մարդը ապահար, հայ եւ ուս միեւնոյն բաները չէ՞ն որ :

— Չէ՛, կըսեմ ինդալով, եւ խօսակցիս — գիտունն ալեհեր գլուխով պատկառելի ծերունի մը, որ միջագոյսի ղեկարանի մըն ալ տէրը պիտի ըլլայ, — բերանը կէս կանգուն բաց կը մնայ :

Այն ատեն, դարմանելու համար ահաճութիւն մը զոր ինծի պատճառած ըլլալ կը կարծէ, Ֆիրէնցէի մէջ արձանագրուած բոլոր բժիշկներուն ապուած ցուցակը կը բերէ, կը սկսի կարդալ եւ ոչ-խտալացիները մատնանշել, հարցնելով միեւնոյն ատեն թէ Հայու անունի նմանող բան մը կրնամ կոր նշմարել ատենց մէջը : Ո՛չ : Մինակ Տօքթօր Մանաս մը ուշագորութիւնս գրաւեց որ, հասկցանք չուտով թէ Հրեայ է եղեր : Մնաց որ շատ կարեւորութիւն պիտի չի կրնայի առ այդ ցուցակին, երկու պատճառով : Նախ չէի գիտեր թէ հայ բժիշկը պաշտօնապէս արձանագրուած էր թաղապետութեան օժտ եւ իր արուեստը ի գործ կը գնէ՞ր հոն թէ ոչ : Յետոյ կրնար ըլլալ որ անունը եւրոպականացուցած ըլլար :

Շնչա՛փնէր կան ընող այդպէս, եւ այնչա՛փ ղեւրին է Յովսէփը՝ ճուղէբրէ, Սերովբեանը՝ Ալեքսանի ընել :

Վերջապէս չերկարեմ, յանկարծ մտարեցի որ եթէ Թրքահայ մըն էր՝ Օսմ. հիւպատոսին, իսկ եթէ ուսահայ մըն էր ուսահանին ղիմել լաւագոյն միջոցը պիտի ըլլար : Անոնք թերեւս բան մը գիտնային : Եւ իրաւալ Օսմ. Հիւպատոսարանի քարտուղարը, խիստ համակրելի անձ մը, բարեացակամութիւնը ունեցաւ տեղեկացնելու ինծի որ, կար տառնիլ բժիշկ մը, հանգիստի կանչուած նախկին ղիմուորական բժիշկ մը՝ Տօքթօր երամ. պէյ, որ տարիներով Լիվօրնոյի մէջ Օսմ. Հիւպատոսութիւնը վարելու պատիւը ունեցած է եւ Ֆիրէնցէ հաստատուած ըլլալով հանդերձ՝ այս պահուս Պոլիս եւ անկէց երկուսուս գացած է ձմեռը անցընելու համար : Այնչա՛փ փնտռուածներէ ետքը երբ վերջապէս յաջող վախճանի մը հասած ըլլալ կը կարծէի, յուսախաբութիւնս մեծ եղաւ, այս վերջին պարագան իմանալով :

— Բայց, ըսաւ յանկարծ, տղայ մը ունի որ հոս է, որ խտալացի կին մը ունի եւ փառատարան է : Ձեմ գիտեր թէ իր հասցէն տալով կրնամ օգտակար ըլլալ ձեզ, չարունակեց յայտնի վարանքով մը, կարծելով անչուտ որ ինքզինքս նայել տալու համար էր որ, բժիշկ մը փռտուելու վրայ էի ես :

— A la bonne heure ! բժիշկ կամ փառատարան, հօրը տեղ տղան, ի՞նչ լիւս ունէր :

Խորին շնորհակալութիւն յայտնելով՝ հասցէն ծոցս կը գնեմ եւ կը մեկնիմ : Ծածրան մտմտութիւնս կ'առնէ զիս սակայն : Բժիշկի մը՝ որ տարիներով Բատլիա ապրած է, տղան շատ հաւանութիւն հոս ծնած ըլլալու է : Իտալեանէն զատ ալ թերեւս ուրիշ լեզու չի գիտեր : Մանաւանդ որ խտալացի ալ կնիկ մը առած է, եւ գուցէ զինքը բնաւ չի շահադրդուեր հայ երիտասարդի մը Ֆիրէնցէէն անցնիլը ու իրեն ներկայանալու փափագ մը ունեցած ըլլալը : Բազմազարդ փառատարան մը մանաւանդ, ապահովարար քարտուղարին միջոցով պիտի ճամբէր զիս : Անգամ մըն ալ հասցէին վրայ աչք մը կը նետեմ. « Առնանտո Երան, Բիւրայ Սանթա Մարքօ, 3 », իր ան-

փափոխ մականունը քիչ մը սիրտ կուտայ ինծի եւ հաստատ քայլերով է որ կը հասնիմ վերոյիշեալ հասցէին , դրանք առջին :

Դոնապանին կը հարցնեմ : Նոյն պահուն , սանդուխէն մէկը վար իջնելու վրայ է , մաքուր հագնուած երիտասարդ մը որ կը լսէ հարցումս եւ յախճապակիէ ձերմակ նշանատարակ մը ցուցնելով ինձ , պատին վրայ որ կապոյտ գիրերով Av. Eram վերտառութիւնը կը կրէ :

— Այո՛ , Տեսէ՞ք Aveugle Eram, terzo piano — երրորդ յարկ . — Կ'ըսէ խնդալով բարձրաձայն եւ դուրս կ'ելլայ դռնէն , առանց ետին նայելու , երբ ես չեմ գիտեր թէ շնորհակալութիւն յայտնել պէտք եմ իրեն թէ բարկութիւն . այդ տարօրինակ անուանակոչութեան եւ իր ծաղրական ծիծաղին համար :

Ինչո՞ւ այդ բառախաղը . Avocatի տեղ Aveugle : Ինչո՞ւ անհարկութիւն արդեօք , Անձնական հակառակո՞րդ մը , կը հարցնեմ ինքնիրենս , սանդուխին առտիճաններէն շուտով ու շունչս բռնելով վեր ելլալով հանդերձ : Դատարանէն դեռ չէ վերադարձած , Կ'ըսեն ինծի : Ապասելէ առաջ , ո՛վ ըլլալս , ինչո՞ւ եկած ըլլալս , կէս գողփերէնով , կէս իտալերէնով կը յայտնեմ իր կնկանը որ մեծ համակրութիւնով կընդունի ու կը պատուասիրէ զիս , ինչ որ քիչ զարմանալի չեմ գտներ : Ապասելով հանդերձ , ան ինծի շատ սիրալիր կերպով տեղեկութիւններ կուտայ Իտալիոյ եւ մասնաւորապէս Ֆրէնցէի վրայ , ես ալ իրեն Պոլսական կեանքին վրայ , որմէ բաւական բան գիտէ արդէն : Այդ իրիկունը բացառիկ դատավարութիւն մը ըլլալուն , բաւական կուշանայ մեծայարդ փաստաբանը եւ ժամանակը անցած ըլլալով , կը հարկադրուիմ մեկնել , խոստանալով հետեւեալ օրը դալ կրկին , եւ քարթ մը կը ձգեմ հասցէիս հետ :

* * *

Հետեւեալ օրը սաստիկ հարբուի մը եւ մէջքի ցաւ մը , ճամբորդութիւններու երկար արքին մէջ , առաջին անգամը ըլլալով անկողինին կը գտմեն զիս : Կը խորհիմ ցաւելով որ , պիտի չկրնամ երթալ հակառակ խօսք տուած ըլլալուն , եւ թերեւս կարծեն որ մեկնած ըլլամ կամ վերադառնալ ուղած չըլլամ

իրենց այցելելու : Անկողնիս մէջ կոնակի վրայ երկնցած , անշարժ , լրագիրս աչքէ կ'անցնեմ , երբ դուռս կը զարնուի ու սենեկապանուհին կը ներկայացնէ ինծի այցեւորս մը որուն վրայ նուրբ գրկերով վիճագրուած է Av. Armando Eram : Այն բազմազգաղ փաստաբանը որ իր քարտուղարին միջոցով պիտի ճամբէր զիս ինչպէս կերեւակայէի , հո՛ս , ինծի փոխադարձ այցելութեան եկած է , կարծես ներում խնդրելու համար երէկ իրիկուան չիրկնալ ժամանակին զալուն եւ զիս սպասցնելուն համար : Ի՞նչ կըսէք . հարբուիս , մէջքի ցաւս , հիւանդութիւնս մոռցայ : Աղէկցած էի կարծես եւ աճապարանքով հագուելով վար վաղցցի :

Հոն , սալոնին մէջ , մէկէ աւելի անակնկալներ պիտի քարացնէին զիս : Արմանտո Երամ , հայազգի երիտասարդ փաստաբանը , իրաւ կոյր էր : Առջի օրուան բառախաղը , իրաւցնէ , բնական պակասութիւն մը հեգնող անշահ հակառակորդի մը մէկ չար կատակն էր : Երկտասարդ պաշտօնեայ մը թեւը մտած ու բերած էր զայն մինչեւ հոն : Ներս մտնելուն պէս կողջունեմ զինքը , շնորհակալութիւն կը յայտնեմ իր ըրած մեծ պատիւին համար եւ իր որպիսութիւնը կը հարցնեմ :

— Կը ցաւիմ որ , կը պատասխանէ ֆրանսերէն լեզուով , մօյրենի լեզուովս պիտի չիրկնամ խօսիլ ձեզի հետ : Մեծ հաճոյք մը պիտի ըլլար այդ ինձ , այնչափ որչափ մեծ աւօթ մը կը սեպեմ հիմա զայն : Գիտէ՞ք որ , Պարոն Սարաֆեան , մեր կարգ մը ընտանիքներուն մէջ ունակութիւն մը կայ հայերէն չի խօսելու : Որով , պզտիկութեանս , Պօլիս եղած ատենս չեմ վարժուած : Շատ չանցած ալ իտալիա եկած եւ հոս ուսումս կատարելագործած ըլլալով տարիներու չըջանին մէջ , իտալերէնը գրեթէ մայրենի լեզու եղած է ինծի : Իսկ ֆրանսերէնը իբր պէտք մը ուսումնասիրութիւններու համար եւ իբր միջազգային լեզու մը պարտք սեպելի ինձ ուսանիլ : Ասով հանդերձ առաջին առիթով , մեծ փափաքներէս մէկն է , հայերէնս ալ սորվիլ : Մինակ թէ հիմակու հիմա , գոնէ հոս այդ կարելիութիւնը չի կայ : Գալով ձեր շնորհակալութեան , ընդհակառակը , ես շնորհակալ

եմ ձեզի որ, ձեր հոս ընելիք կարճ séjourին մէջ, խորհեր էք հօրս եւ ինծի ու պատիւը ըրեր էք մեր խոնարհ յարկը այցելելու, ուր դժբաղդաբար կը ցաւիմ որ չիկրցայ զանուիլ՝ վճարեկ ատենի լացառիկ կերպով երկարատեւ դատաւարութեան մը պատճառով։ Անիրաւ չըլլալու համար պէտք է ըսել որ քիչ մըն ալ ես էի այդ երկարատեւութեան պատճառը, քանի որ միմիայն իմ պաշտպանողական մէկուկէս ժամէն աւելի տեւեց։ Ձեր հասցէն ձգած էիք. եւ զիտէք հարկաւ որ, նախնական դատարանին, նոյն իսկ ձեր պանդոխին հրապարակին վրայ կը նայի։ Որով այս առտու դատարան երթալէ առաջ ուղեցի փոխադարձ այցելութեան պարտքս կատարել եւ շնորհակալութիւն յայտնելով ձեր համակրութեան համար, խնդրել որ կրկին հաճիք պատուել ձեր ներկայութիւնովը մեր տունը ուր պիտի ըլլամ այս անգամ ապահովաբար, ձեզ ընդունլու համար . . .

Ինչ սիրուն ու համակրական ընդունելութիւն, Տէր Աստուած։ Շուարած էի։ Փոխադարձ քաղաքավարական ու շնորհակալութեան հաւաստիքներու մէջ մոլորեցանք երկուքս ալ։ Շատ մը ուրիշ բաներու վրայ ալ խօսեցանք ներսէն դուրսէն, թուրքերէն լեզուով։ Իր կեանքը պատմեց, ճամբորդութիւններս նկարագրեցի։ Եւ ամբողջ ժամ մը, դատարանն ալ մոռցանք, գործն ալ։

Երտունքիկու տարու է։ Բիզարի համալսարանին մէջ առած է իր ուսումը եւ վկայականը զոր Ումպէրթօ Ա. ի եւ խաղաղական զինանշանի վիմանկար գեղադրութիւնով զարդարուած ու ոսկեզօծ չրջանակուած տեսած էի առջի իրիկունը, պատէն կախուած՝ իր աշխատութեան սենեակին մէջ, գրասեղանին վերեւ, փայտէ պարզ խաչելութեան մը տակ։ Մասնագիտութիւնով pénaliste է կամ criminaliste, ինչպէս կըսեն։ Թուի, երկար գէմքով, բարձր ճակատով ու քիչ մը ցցուած այտուսկրներով, կատարելապէս Հայու գիւմազութիւն մը ունի։ Խոշոր, չափ խոշոր բացուած, ու խոսք մօտը դուրս ցցուած գունտ աչքեր, կարծես ամէն վայրկեան լսան մը տեսնալու համար ըրած ջանքերովիւն, հիմա պիտի պայթին ու դուրս թափին։ Բան

մը չեն տեսնար սակայն եւ այս՝ իր ծնունդէն ի վեր։ Աշխարհի վրայ իր նայուածքը ընաւ չէ պտրացուցած. բայց իր միտքը ամբողջ տիեզերքը կընդգրկէ։ Մէյ մը գետինը կը յառին անոնք անշարժ, մէյ մը ձեղունին՝ վեր կը դառնան։ Ուղղութիւնը կորսնցուցած բանի մը կը նմանին անոնք։ Ուղղութիւն մը երբեք չեն ունեցած արդէն։ Եւ ինչ տարօրինակ ու ազդեցիկ հակասութիւն, երբ կը խորհիմ խիստ մանր ու գրեթէ կիսափակ աչքերով մարդոց որոնց նայուածքը ասեղի պէս ծակող, խորաթափանց բան մը ունի եւ զիտակի մը չափ հեռատես է, մինչ այս, լայնաբաց, խոշոր, ոչինչ կը տեսնայ։ Հեղեհական դառն ժպիտ մը կը գծուի երբեմն իր չրթուքին երկու քովերն ի վար կախուող, ցուցադրուող ակոսներու շարքի մը հետ՝ որ տեսակ մը պայծառացում կուզայ տալ մթնածղէմքին ու կոճոռոտած ճակատին։ Առջի գիշերուան դատաւարութեան կը վերադառնանք նորէն։ Աւազակ մը ազատած է տասը տարուան բանտարկութեան մը վճիռէն զոր նախնական դատարանը տուած էր։

— Գործս, Պարոն Սարաֆեան, կըսէ, ամէն օր գողերու, չարագործներու, մարդասպաններու հետ է . . .

— Շատ կա՞յ որ, կը փութամ հարցնել։

— Ու՛ֆ, գլխուս մաղերէն չատ։ Կերեւայ թէ տեղական թերթեր չէք կարդար։ Խաղաղքէնի չառ վարժ չըլլալուդ համար թերեւ։ Եւ սակայն անոնց դասական երկրն է հոս։ Մինակ Ֆիրէնցէի համար չէ որ կըսեմ, ամբողջ Թաալիս, Եւ քանի վար իջնաք՝ այնչափ աղքատութիւնը, գողութիւնը, վայրագութիւնը, յուսահատութիւնը, մարդասպանութիւնը աւելի պիտի տեսնաք։ Եւ եթէ դուրսնալի բան մը կայ ինծի համար, ան ալ այդ չարագործներուն ունեցած յարգանքն է ինծի նկատմամբ, հակառակ անոր որ աւաղակի մը ակնածանքը բան մը չաւելցնէր փառքիս վրայ, կը յարէ խնդալով։ Ֆիրէնցէի մէջ թերեւս միակ անձն եմ որ գողութեան մը կամ որ եւ է չարութեան մը կոթակայ չէ եղած կամ պիտի չըլլայ։ Հայր մըն եմ իրենց համար։ Անգամ մը կը յիշեմ որ բանտին մէջ ուր գացած էի գործով,

նորընծայ բայց վտանգաւոր չարագործի մը
ոտքին վրայ եմ կոխեր, քնացած տեղը, ա-
ռանց գիտնալու, քանի որ չեմ տեսնար:
Մարդը չէր ճանչնար զիս եւ կուգէր գէշ
հատուցում մը ընել, երբ միւս բանտարկ-
եալները վրան խոյացան եւ ծեծ մըն ալ քա-
շեցին անոր: Շատ չանցած սակայն, բան-
տէն ազատեցի զայն, իրեն փոխանորդու-
թիւնը ստանձնելով: Տարօրինակ չէ՞:

— Օ'հ, չառ տարօրինակ: Բան մը կայ
սակայն որ շատոնց է միտքս կը դադեցնէ
եւ չեմ կրնար լուծում մը տալ անոր, ու
հիմա առիթը շատ բարեղէպ է ինձ համար,
այդ հարցումը ձեզ ընելու, եթէ կը ներէք:
Շատ հաւանօրէն պիտի կրնաք լուսաբանել
զիս այդ մասին: Շատ անգամներ կը կար-
դանք քսամենելի ոճրագործութիւններ, որոնց
շատ en flagrant délit, եւ ատոնց հեղինակ-
ները միշտ կը գտնեն ականաւոր փաստաբան-
ներ, որոնք ստանձնեն անոնց դատը եւ գիտ-
նալով հանդերձ անոնց իրապէս չարագործ
մը ըլլալը, կը պաշտպանեն զանոնք: Պաշտ-
պանելը խնդիր չէ այնչափ՝ որչափ սա պա-
րագան թէ ինտո՞ր միշտ կը գտնեն բան մը,
նոյնիսկ շատ բաներ խօսելու ի նպաստ անոնց
եւ շատ անգամ ուժով ու բռնող պերճախօ-
սութիւն մըն ալ կարող կ'ըլլան միացնել
անոր:

— Շատ պարզ է, Պարոն Սարաֆեան,
կ'ըսէ, աչքերուն գորշ ոլորտները յանկարծ
գտնէն դէպ ի վեր թաւալցնելով, որ կար-
ծես գաղափարներու չրջան մը եւ դասակար-
գութիւն մը կը մասնէ իր միտքին մէջը: Եւ
հոգ է արդէն դադանիքը, եթէ երբեք դադա-
նիք կայ: Միշտ կարելի է բան մը գտնել,
եթէ flagrant délit կայ, մեղմացուցիչ պա-
րագաներ կը փնտռենք: Հակառակ պարա-
գային՝ շատ դիւրին է, որչափ ալ զօրաւոր
ապացոյցներ ըլլան ամբաստանեալին դէմ:
Միշտ երեւոյթներ, նոյնիսկ ծանր վկայու-
թիւններ՝ նոյնիսկ անհերքելի, շատ մը կէ-
տերու մէջ իրար կը հակասեն, եթէ ուշադ-
րութիւնով գննենք: Տեսակ մը մթութիւն
կ'ըլլայ երբեմն գործին մէջ, Դատաւորներն
ալ, գրեթէ միշտ, կը զգուշանան յանցաւոր
մը պատժելէ աւելի՝ անմեղ մը դատաւար-

տելէ, ինչ որ օրէնքի եւ խիղճի տեսակէտով
կրնայ գէշ հետեւանքներ ունենալ իրենց եւ
Արդարութեան նկատմամբ: Փաստաբաններն
ալ միշտ կը ջանան օգուտ քաղել այդ մթու-
թիւնէն եւ զատողներուն այդ տրամադրու-
թիւնէն: Թէ չարագործ մը ըլլալը գիտնա-
լով հանգերձ կը պաշտպանեն, ատիկա հացի
խնդիր է: Իսկ թէ ինտո՞ր կը գտնան, նոյն
խնդիր չափաւորութիւն մը եւ անբաստանեա-
լին ի նպաստ համակրանք մը արթնցնելու
դադանիքը, աս ալ ոչ նուազ պարզ է: Ես
իմ մասին, պահ մը ինքզինքս յանցաւորին
տեղը կը դնեմ: Կերեակայեմ բանտը, ընտա-
նիքս, զուակներս, աշխատութիւնը, անոնց
վիճակը, զգլումն ալ թերեւս, եւ դեռ շատ
մը բաներ եւ անկարելի է որ չի յուզուիմ:
Այդ յուզումը ինքնին պիտի բաւէր ամէն
բանի կարող դարձնելու մարդս, պերճախօ-
սութեան, զիւրազգածութեան, զթութեան,
եւ համակրանքի հաղորդականութեան . . .

* * *

Հետեւեալ օրը փոխադարձ այցելութեան
կ'երթամ: Կոկիկ ու սիրուն արարթման մը,
գետինը արեւելքի գորգերով ծածկուած որոնք
տանաէրը կը յիշեցնեն, պատերը խալական
նկարներով դարգարուն որոնք աստիքներին
խորհիլ կուտան: Երկուքն ալ սակայն ան-
ըսագիւտ ու անմոռանալի պատուասիրու-
թիւն մը կ'ընեն ինձ. հակառակ չի գործածե-
լուս, չեմ կրնար մերժել խանդէն:

— Օ'օ', երկու orientալներ որոնք իրար
կուպան անկարելի է որ իրարու խանդէ չի
խմեն, կ'ըսէ խնդալով ու հաստատ չեշտով
մը:

Ամիսներէ ի վեր է որ Պօլիսի վրայ խօսած
չէի բարեկամի մը հետ: Երկուքս ալ հաւա-
սար խանդով ու կարօտով կը փարինք այդ
տեսակ խօսակցութեան մը: Ժամերը կ'անց-
նին: Վերջէն նորէն կանդաւառանք Ֆի-
րէնցէի, իր գործին: Սարսափելի մրցում մը
կայ հոն փաստաբաններուն մէջ, Դրամը քիչ
մարդը շատ է, բովանդակ իտալիոյ մէջ, ա-
մէն գործի համար: Մրցակցութիւնը ալ
գձձութեան տարած են շատեր: Իրար վա-
տահաճաւել, գրեթէ պարտականութիւն
մըն է իրենց համար: Եւ շուտով կը կռահեմ

որ առջի օրուան անդուլթ բառախաղին հեղինակը մրցակից փաստաբան մըն է եղեր :

— Բայց փառք, հաղար փառք Տիրոջը նորէն, վրայ կը բերէ, որ հիւանդագին ու աչազուրկ այս վիճակիս մէջ, օտար երկրի մը մէջ, ասանկ հակասութեան մը հանգէպ կրնամ կոր աշխատիլ ու հացս լիուլի չափիլ : Կեանքի բեռը անտանելի չէ ինծի, ընդհակառակը : Միշտ կը ջանամ կարելի եղածին չափ վայելք մը հանել անկից, թերեւս այնչափ որչափ ինչ շատ աւելի առողջ ու թանկագին տեսողութիւնով մըն ալ օժտուած պարոններ չեն կրցած եւ չեն կրնար : Կինս թէ եւ օտարազգի, բայց անտաղիւտ սիրտ մը կը կրէ եւ միեւնոյն տանն կատարեալ ու գուրգուրալից հիւանդագան մըն է, ինծի, տկարակալմ ու յաւէտ լուսազուրկ այս կեանքիս մէջ : Խոնարհ է ու համակերպող՝ չահածիս ու վարած կեանքիս : Կրկնապէս թանկագին է հիմա ան ինծի եւ ես կրկնապէս գոհ եմ ու երջանիկ : Խնդիրը կեանքի պայմաններուն յարմարելուն մէջն է, Պարոն Սարաֆեան : Il faut savoir s'arranger et se ranger :

Դեռ երկարօրէն կը խօսի իր կեանքէն, խալալական կեանքէն, ընդհանուր եւրոպական կեանքին վրայ, որու մասին ապշեցուցիչ կերպով ընդարձակ ու յստակ դատափարհներ ունի : Հիացումս կը յայտնեմ եւ չեմ կրնար զարմանք մը զայլել թէ ի՞նչպէս իր այդ աչազուրկ վիճակին մէջ կրցեր է տարիներով հետեւիլ օտար լեզուի մը, բարձրագոյն համալսարանի մը, դժուարին արհեստի մը եւ կրցեր է տիրանալ այդքան բազմակողմանի հմտութեան մը :

Համեստօրէն, չափազանցած ըլլալս ինձ զգացնելէ ետքը .

— Կամք եւ աշխատութիւն, կը պատասխանէ պարզօրէն՝ աչքերուն անօգուտ կիսագունտերը գլտորցնելով կողմններուն մէջը :

Ահաւասիկ երկու բառ, զորս անկէցի վեր միշտ կը դարձգարձեմ գլուխիս մէջ եւ ամէն անգամուն իր լուրջ ու կոշտ գիմաստները կ'անցնի յիշողութեանս մէջէն : Խտացած ի՞նչ խորունկ խրատ եւ ի՞նչ բարոյական կայ այդ երկու բառերուն մէջ : Իրենց երկրին մէջ, ու

բուն լեզուն արդէն իսկ գիտեն, պատուական տեսողութիւնով մըն ալ օժտուած եւ իրենց համար դպրոցի բազմաթիւ դրամ վառնուած ինչ պարոններ կան, իրաւ, որոնք ամէն զիւրութիւն ունին բան մը ըլլալու եւ բան մըն ալ չեն եղած : Իրենց աչքերը կեանքի մէջ աշխատութենէն ու յոգնութենէն տարբեր լուսանցքներու վրայ են բացուած կարծես : Ձէ թէ կոյր՝ այլ մատերնուն ծայրը պղտիկ վէրք մը միայն ունենալով, աշխատելու անկարող պիտի հռչակէին իրենք զիրենք : Մինչդեռ հոս, աչքի լոյսէ զրկուած աղայ մը, մասններուն ծայրովը ամբողջ ստուար հատորներ կը շօշափէ, մատներովը լեզու, օրէնք, պայման կը սորվի, տարիներով զրասեղաններու վրայ հակած, մէջքը կոտրած, եւ օտար հողի վրայ, բունն մրցումի մը ու դժնդակ հակառակութիւններու մէջ, կեանքի պայքարը կը մղէ : աչքը բաց ու աչածակ արուեստակիցներու երամի մը մէջ, իր հացը կը չափ պատուաւորապէս, եւ հայ փաստաբանը ձեռքի վրայ է որ կը բռնուի :

Եւ ի՞նչ հեգնութիւն : Ինք որ քաղաքին պարզ ուղիներուն մէջ, առանց ծառայի մը թեւէն բռնած ըլլալու չիկրնար քալել, կեանքի բաւիղին անկներուն ու մանուածներուն մէջէն, ուղեկորոյս յանցապարտներուն թեւէն բռնած դուրս կը քալէ եւ վահագմէմ անդունդէն յիտակ ճամբու վրայ կը բերէ : Revanche մը չէ՞ք տեսար դուք ասոր մէջը, բնութեանէն զրկուած մարդուն ուրվանշը միւս ամէն կերպով առանձնաշնորհաւորներուն վրայ : Ես կը կարծեմ որ կոյր փաստաբանը, ասոր մէջէն երեւակայելի ամենէն մեծ դոհուտակութիւնը ու անսահման հպարտանք մը կրնայ քաղել :

Եւ ազնուութիւնը այնքան առաջ կը տանի որ մեկնումի օրս, — կիրակի մը, — մինչեւ կայարան կուգայ ինծի ճամբելու համար, իր ուրախութիւնը կը յայտնէ Պօլսեցի Հայ մը ճանչցած ըլլալուն համար եւ կրկին տեսութիւն կը մաղթէ, իր Պօլիսի ազգականներուն հասցէին շատ մը բարեւելի յանձնարարելով ինծի : Դեռ աչքիս առջեւն է իր մութ դէմքին վրայ ցնծութեան ճառագայթումը, ուր մեծաբաց աչքերը, խաւարած

արեւներու տխուր տպաւորութիւնը կ'ընեն , ուր ճակատը պահ մը կը թօթափէ իր կոծիւները , հոգեկան détenteին ազդեցութեանը տակ , եւ իր նայուածքին պէս մոլորած , ձեռնոցապատ ձեռքերն ալ գլխարկը կը շարժեալկեն օդին մէջ , կառախումբին ետեւէն՝ որ իր մութին պէս դուրս կը պոփկայ կայաքանէն , դէպի դարերու , հին ու նոր աշխարհներու , կրօքի յուսահեղեղն ու հրաշակերտ մայրաքաղաքը , — չքնաղն Զիթթա էթէրնա . . . :

Ռոմա

Օ. ԶԻՅԵԼ-ՍԱՐԱՅ

Մ Ր Զ Մ Վ Ո Ւ Ր Ո

Հապանքով փախայ քաղին ժխտեմ ու ծովափին մօտ հիմայ ծովօրէն նստած կը դիտեմ փրփուրներ ներմակ եզերքը շարուած գերք ծրփուն նաւակ :

Հիմայ խիս կանաչ սաղարքներուն տակ Ման գալով անփոք եւ անըպատակ Սրբեմ ունկնդրել ննդուկին անո՞ք Որ բոյնէն փախած նուազեղ անո՞ք :

Երբ կը բարձրանամ սարեր լեռներու Պատրանքն ունիմ քե , աւելի նեղու կըլլամ թախարհէն , եւ քե խասուսիկ Ամպերուն կ'երբամ աւելի մօտիկ :

Ու այն խասուսիկ ամպերէն անդին Հոգիս անժուժկալ՝ կապոյտ անդունդին Ծոցը մխրնի , մերկանալով իր Յոյգերը մառող՝ իղները պատիր :

Երբ լուսնակն արծաթ շողեր կը քալիկ Ու ծովն հրմայուած կարծես մխրնի , Այն շողերուն տակ կուզէի ես ալ Առանց զարբնումի քաղուիլ քնանալ :

Ափսո՛ս , ծով ժպտուն , վերջալոյսն ու այգ Լուսնակին պչրանք եւ առնան հոնայք Կրնամ սփոփել սիրս անձկութեամբ լի Որ բացակային կարօտով հալի :

Գրքին ծալին մէջ ինչպէս չոր սերեւ Թաղուած ծակոսկած է սիրս արդարեւ , Նօսը կմախքն է մնացեալ հազիւ Երանի՛ք քեռ պահե բոյն ազնիւ :

Այո՛ , չոր սերեւ՝ սիրս ամեն հովեմ Դողայ՝ տառապի ամեն նուրբ ցաւեմ . Աստուած , մի՛ տար ցաւ՝ մինչեւ դէպի ձոր Փրցած զլորի այս սերեւիկը չոր :

9 Սեպտեմբ. 1902

Մ. ԱՃԷՍԵԱՆ

ՆՈՒՒՐԱԿԱՆ ԱՌԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Քրիստ. 995 թուականին (Տոմարի Նիդիին) Հոգեգալտեան առնի շարժուն Մշոյ Ս. Աղբերիկ վանքը հետզհետէ կը լեցուէր հաւատաւոր ուխտաւորներու բազմութեամբ , որ երթալով կը խոնէր : Արդէն չէնքը անբաւական էր զանոնք ընդունելու : Վանքին մէջ կը պատասպարուէին հաւաւոր քաղաքներէ ու գաւառներէ հասած աղքատական ընտանիքներ միայն , իսկ ջերմեռանդ ժողովուրդը՝ ինչպէս ամէն տեղ , հոն ալ բացօթեայ կը մնար , բաւկերուն մէջ՝ քարերու վրայ , պրուկներուն մէջ՝ կանանչներուն վրայ : Ուխտաւորներ կային հետու եւ մօտիկ զիւգերէ , դաշտէն ու սարէն : Վանքին վանահայրն էր Տ. Եղիշէ արհեստագործ ինքն ալ ունէր իր ուխտաւոր հիւրերը , որոնց մէջ ամէնէն աչքառու դէմքն էր՝ մօտիկ թեմի մը աւագ-երէցը՝ Տ. Բարիկ քահանան , որ ընտանիքով մէկտեղ ուխտի եկած էր : Արժանայարգ աւագ-երէցը հինգ զաւակներ ունեցեր , հինգն ալ մեռեր էին : Անպտուղ կը մնար ամուլը : Ժողովուրդը՝ գիտուն թէ անդէտ՝ ամէն այս տեսակ պարագաներուն՝ հոգեկան զգացմանց միջոցաւ՝ սըրբութեանց կ'ապաւինի : Սըրբ Աղբերիկ կենաց փայտին հրաշագործ համբաւը՝ գիւղէ գիւղ իրենց հասեր էր : Երէցն ու երէցիկնը ուխտեր էին , եթէ զաւակ մը ընծանի իրենց , Սըրբ Աղբերիկ երթան՝ ու որդեծնութիւնը հոն տեղի ունենայ , որպէս զի անոր ծնունդը օրհնուի , նուիրագործուի : Անոր համար եկած էին : Երէցիկնը ծուռ դեպին զարկած եւ արու զաւակ մը աշխարհ բերելով նուիրեր էր Կենաց փայտ Ս. Նշանին : Այս ծննդաբե-

լուծիւնը ուրախութեամբ ողջունուած էր Տ. Բարիկ երիցու ամէն բարեկամներէն : Տղան հոն մկրտուած էր կնքահայրութեամբ Տէր Եղիշէ Եպիսկոպոսին , որ անուանադրեր էր զայն Եղիշէ : Մանուկն ու ծնողք դարձեր էին իրենց տեղը :

Գիւղացիներէն ոմանք իրենց հիւանդները, ցաւազարները կը շարէին Ս. Խաչի անցնելիք ճամբուն վրայ , ոմանք ցորենի օրանները, այգիի բերքերը , ուրիշները տաւարներու , ոչխարներու հօտեր , նախիրներ կը բերէին , որ օրհնուին , որ ղերծ մնան պատահարէ , ցաւէ—չոռէ : Կ'օրհնուէին ամէնքն ալ : Ամէնէն ջերմագին զիմուսները տեղի կուսենային՝ անպառաղ ամուսնեմէ եւ ճաւրկ—եղուկ անդամալոյծներէ : առաջինները՝ արհամարհուած կանանց դասէն , եւ երկրորդները՝ մերժուած ընկերակցութենէ՝ իրեւ անբուժելի ախտաւորակներ : Վերջինները՝ հին ժամանակներ՝ չէին պահուիր ժողովրդեան մէջ եւ կ'ուղարկուէին անդամալոյծներու յատուկ վանքերը, որոնցմէ ծանօթ է այժմ՝ Վանի , Տիրամէր Սուրբ Աստուածածնի վանքը : Եւ կնիկները մէկը անիծելու ատեն՝ կ'ըսեն «Տէրամէ՛ր երթա՛ս, Տիրամէ՛ր քչուի՛ս» : Վաղեմի ինչ գեղեցիկ կարգադրութիւններ եղեր են՝ մանաւանդ կաղերը , կոյրերը , անդամալոյծները, ուրուկները եւայլն պատասպարելու համար : Մշոյ դաշտին մէջ կայ մինչեւ հիւայ գիւղ մը ուրուկնոց անուն , որ ապաստանարան եղած է ուրուկներու :

Տ. Եղիշէ Սրբազան գեղէ գեղ Մանազկերտ պիտի երթար , նուէր հաւաքելու անոր բարեպաշտ ու փարթամ բնակչութենէն : Հոն էր նաեւ իր սանահայր Տ. Բարիկ քահանան , որ արդէն կանխած ու խնդրած էր անոր այցելութիւնը : Տ. Բարիկը եպիսկոպոսէ մը աւելի պատկառելի էր : Իր սերունդէն շատ մը եպիսկոպոսներ յառաջ եկեր էին : Կարծողներ կան թէ նշանաւոր եպիսկոպոսի մը սերունդէն ըլլար ինքն ալ :

Սրբազանը շարունակեց ճամբան , ամէն տեղ ժողովրդի հօգեւոր զգացումներուն առարկայ ըլլալով : Հացեաց Լ. գիւղին միտաբարով ըսեր էր , է՛լ մօտիկ էր Մանազկերտն ալ : Սրբազանը կ'աճապարէր քիչ մը՝ երբ

նոյն գիւղացի ծերունի համբայ մը , իր ալէխառ մորուքով ու 13 մշակներու հետ՝ ջողաւ իր առջեւ , ինչ որ ըրին , ոտքի չէր ելնար : — «Սուրբ մասուռնքն ու Սրբազանը խնդիրքս կատարեն» — յետոյ , «40 օրաւար արտա երկու տարի է , որ պտուղ չի տար , 85 անդամէ բաղկացեալ ընտանիքս , ոգեպահիկի կարօտեցած է : Թո՛ղ օրհնէ արտըս , որ պտուղ բերէ» : Եպիսկոպոսը շուարեցաւ , ինչ ըսել , ինչ ընել , — Ծերունին կրկնեց խնդիրը — «օրհնութեան ջուր կուգեմ» : Եպիսկոպոսը վար իջաւ , ահագին տաշտ մը ջուր բերին , կարգաց եւ Ս. Նշանի պղտիկ խաչով խառնեց եւ օրհնեց ջուրը , որ յետոյ սրսկուեցաւ անբեր արախն մէջ : — Ծերունին արախն արդիւնքի յէջ Ս. Նշանին նուիրեց : Եպիսկոպոսին կարաւանը վերսկսաւ իր օրհնատարած գնացքը :

* * *

Մանազկերտի մայր եկեղեցիին հանդիպակաց՝ հարաւային կողմը կը գտնուէր երկյարկանի , քարուկիր ու ընդարձակ չէնք մը , որ արեւելքէն ու արեւմուտքէն չրջանաւորուած էր երկու քառակուսի բակերով , որոնցմէ մէկը բանջարանոցի յատկացուած էր : Կաղմածները համակ՝ բաղկացած էին կոփածոյ սրբատաշ քարերէ : Գեղեցիկ էր մանաւանդ նրբաքանդակ քարերէ շինուած պատշգամբ , որուն առջեւ կը պարզուէր այլազան տուներու շղթայ մը եւ անդին , քիչ մը հեռուն՝ դալարի ուռիներով եզերուած պատանի Աւրածանին , որ կամկար կը հոսէր բեղմնաւոր դաշտերու մէջէն :

Այս տունը ծանօթ Տ. Բարիկ Ա. քահանայի բնակարանն էր : Աւտընէ ի վեր , շատ կանուխէն՝ ոգեւորութիւն մը կը տիրէր տան մէջ : Սպասուհիները մշակները զբաղուած էին՝ ընդարձակ չէնքին ներսը լուալու , մաքրելու , յարդարելու ու զարդարելու : Ամէնէն շատ զբաղումը խոհանոց—թոնրատան կողմն էր : Հինդ—վեց օճախներ կը մխային տաքցընելով իրենց վրայ շարուած պղընձէ եւ հողէ պուտուկները , ծափիկիկները , եղտանները : Տունն էին Տ. Բարիկը եւ երէցիկներ որոնք կը հսկէին , մէկն՝ յարդարման , միւսը՝ կերակուրներու պատրաստութեան . — «Երէց-

կին , ա՛յնպէս մը ընես , որ ամօթով չեղնանք Սրբազան կնքահօր առջեւ» : — Տ. Եղիշէ եպիսկոպոսը հացկերոյթի հրաւիրուած էր հոն , առաւօտուայ ճաշը ընելու , ուրիշ հրաւիրեալներու հետ , որովհետեւ Տ. Բարիկը նիւթապէս ալ հարուստ քահանայ էր : Մէ՛կ հատիկ զաւակ մը ծլեր էր — մանկիկն Եղիշէ , որ ծանօթ է մեզի , եւ որ կ'աղբէր ու կը թըփոէր : Թէեւ դեռ յօրօրոցի , սակայն կրնար ոտքի վրայ տոտլտալ , երբեք : Օրուան զրազումի շատութեան պատճառով երէցիկներ օրօրոցն ալ փոխադրած էր թոնրատունը , մօտէն հսկելու իր մէկ ու ճար զաւակին , զոր ամենեւին նեղացնել չէին ուզեր : Բայց աղան հանգիստ չէր քնարանին մէջ , ուրկէ լուսնաշխարհ ելնելու իր ամէն օրուայ ժուժը հասեր էր : Պարապ տեղ մայրը աշխատեցաւ խաբըռտել . չքնացաւ . ուստի քակկցանոր պինտ-բարձը եւ տղան տախտին վրայ սկսաւ խաղալ : Նոր ոտնազնւած մանուկներու համար գոնե՛ր անուն եռանիւ սալակ մը հնարուած է , որով տղան ինքնիրեն կրնայ զրօնուել : Մայրը տարած էր զայն խոհանոցին մէկ անկիւնը՝ գնամնիկ-գոնէլին մօտ : Մանկիկը կը խաղար : Մայրը մօտիկցաւ թոնրին՝ անկէ հանելու խորոված մը , որ սկսեք էր ձենձերիլ : Նոյն միջոցին տան բոլոր սպասուհիներ , մշակներ՝ ասդին անդին զանազան ծառայութեամբ զրազած էին , ոչ ոք կար ի թոնրատուն , բացի երէցիկինէն , որ յանկարծ վեր կանչուեցաւ , մինակուկ թողլով իր խուփիկը որ առիւթ կեցած էր սալակին մօտ : Յանկարծ տղան շարժեց գոնէլը , որ սկսաւ արագարար դառնալ ու կըր շրջան մը ընելով հասաւ թոնրին մօտ : Դժբախտաբար՝ տղան քեթրելով՝ ցոփնաւ , ու հաւասարակառութիւնը կորսուելով՝ սալով միաւրին ինկաւ ի թոնրի :

Երէցիկներ խելոթափ ետ եկաւ , կարծես քնազգաբար գուշակելով աղէտը : Սիրտը պայթելու առաիճան կը արփէր — թոնրը բաց , արեւս մինակ թողուցի , Աստուածն է՛ր առեր արդեօք . . . կը մոմար : Ներս մտնելով , երբ տղան եւ սալակը չեւեցան՝ աշխատաւար գետին ինկաւ : Թոնրէն ճերձեր հօտը կը բուրէր : Ոտքի ելաւ եւ դէպ ի թո-

նիր մէկ վազեց , ու ինչ տեսաւ , սրտապատարճ՝ մանկիկը կ'այրէր : Երէցիկներ նորէն ուշաթափ եղաւ : Նոյն պահուն էր որ վրայ կը հասնէր ծեր սպասուհին Դուխտիկը եւ անմիջապէս կռահելով աղէտը՝ թոնրէն կը հանէր գործելի (ածխացած) մանկիկը , Զարթուածայր , ինքզինքը կրակ ձգելու վրայ էր՝ երբ Դուխտիկը կեցուց զինք : Տիկին , Աւետուածը կանչէ , նշով օր է , Սրբազանն ու Ս. Նշանը հիւր կուգան , խնայէ՛ այս վանք տանը , մի՛ վրդովիր : — Ինչ ընեմ հապա , սա միամօրիս դիակին առջեւ : — Համբերիկ , Աստուծոյ ապաւինիլ — Երէցիկներ գիրկն առաւ անշնչացած մանկիկը մինչ Դուխտիկը վարկենարար ծաղկնոցէն կը հասցնէր փունջը մամուռ Նարդոսի թփեր , որոցմով պատառեց երախան եւ փաթթեց օրօրոցին մէջ : Կա՛ր , չկար , Աստուած գիտէր , որովհետեւ ամենեւին ձէն ու ձիւն չէր լսուեր անկէ : Իմաստուն սպասուհին՝ օրօրոցը մեծ սրահը փոխադրեց ուր պիտի ընդունուէին հրաւիրեալները : — Ս. Նշանին յանձնե՛ք , է՛լ դեղ-դեղ-րօնք չհասնիր անոր : — Սրտապնդեց խելայեղ մայրը , զայն ոտքի հանեց , ճիշդ այն պահուն երբ Սրբազանը իր հետեւորդներով կը հասնէր : Խեղճ Տէր Բարիկը բոլորովին անկուման էր անցուղարձէն : Սպասուհին վեր հանեց ախրամած ու թառամած տիկինը , որոնք Սրբազանի աչը համբուրելէ վերջ՝ Ս. Նշանը տուն եւ տարին հանգչեցուցին օրօրոցին մէջ անշունչ պառկած մանկան սրտին վրայ :

Տիկինը՝ հիմայ մոռցած էր տղուն ցաւը , զինքը կ'այրէր աւելի Տ. Բարիկին կրելիք վիշտը , երբ իմանար այս ահաւելի արկածը : Մարելիք կուգար վրայ , երբ սպասուհին հարկ տեսաւ հեռացնել զայն սրահէն : Երէցիկներ գնաց , առանձնացաւ՝ աննկարագրելի յուզումներու մէջ . իսկ Դուխտիկը ծուռիկ չոգաւ ճգորին մօտ , հազար ախլակներով՝ Աստուածային այցելութիւն մը կը խնդրէր «գործելի» մանկան բժշկութեան համար :

* * *

Այս տեսակ հացկերոյթներու մէջ՝ զինեւ խուժը սովորական էր : Ուրախ էին Տէրտէրը եւ հրաւիրեալները , Սրբազանն ալ երբ քիչ

մը զուարթացաւ, յիշեց իր սանիկը եւ զւղեց տեանել: Ծեր Դուխտիկը չլսելու զարկաւ: Հուզելով խռովել տուն ու տեղը: Աըր-բազանը կրկնեց, երեքնեց, յայց ապարդիւն: Տէր Բարիկը վազեց եւ երբ ձեռք պիտի երկընցնէր օրօրոցին, սպասուէին էլ զինք չկրնալով զսպել, բարձրաձայն սկսաւ լալ: Իրար անցան ամէնքն ալ, Տէրտէրը գրեթէ սառած էր: — Ի՜նչ կայ, ի՜նչ կայ, պօռա-ցին չորեք-զիմաց: — Ի՜նչ կայ, աղան թո-նիր խնկեր, գործելի դարձեր է... Ըսաւ ձայն մը, խեղդուկ ու հեծկտեալ, երէցկինն էր: Եպիսկոպոսը անձամբ վազեց օրօրոցին վրայ, կապերը քակած չքակած՝ երախտիկն ճշոյր լուեցաւ յանկարծ: Մայր ու սպասու-հի վրայ վազեցին եւ հիացմամբ տեսան, որ քժշկեալ եւ կենազործեալ էր... Եւ խաղաղ ըլլալու քանի մը նշաններ միայն կը մնային փափուկ մարմինին վրայ: — Ս Նշանի հը-րաչքն է — գոչեցին մայրն ու սանտուն: — Ս. Խաչի հրաչքն է — կրկնեցին Սրբազանն ու հրախրեալք: Է՛լ ամէնքն էլ լցուած հու-գեւոր անպատուժ ուրախութեամբ՝ սկսեցին զիրար շնորհաւորել: Հրաչքին աւետիքը՝ բո-լոր աները օրօրք եղաւ քանի մը վայրկեանի մէջ: Ամէն մարդ հոն կը խուժէր, հոն հա-սան նաեւ ուրիշ եկեղեցականներ որոնք նոյնպէս հոգեւոր այցելութեան ելած էին հոն: Յաւերժացնելու համար Ս. Նշանին հրաչալիքը, Մաղաղաթ առին, արձանադիր կազմեցին, ստորագրելով ու կնքելով, եւ այն օրէն Մանագիկերտը Ս. Աղբերիկին հոգե-ւոր թեմն եղաւ, Ս. Խաչին անունն ալ «Գործել-Յարոյց»: Անբաւ նուէրներ արուե-ցան: Երէցկինը իր բոլոր զարդերը նուիրեց: Ազնուական տիկին մը իր սակի մանեակը կախեց խաչէն. Տ. Բարիկը իր ունեցածին կէսը, Նուիրող նուիրողի եղաւ, ու փառա-պանծ հռչակուեցաւ Ս. Աղբերիկ — փայտ պառուական:

Տ. Եղիշէ Եպիսկոպոսը վերադարձաւ իր վանքը սիրունիկ՝ առօք փառօք, բնօք ու կառօք ու Ս. Նշան նուիրադործն ալ «Խաչե-րուն Խաչը» տիտղոսն ստացաւ:

ԳԵՂԱՍ

ՏՈՒՆԻՍ ԶԱՄԲԱՆ

(ՊԶՏԻԿ ՆԵՇԵՐ)

Գ.

Նոյեմբ. 4

Այսօր իրիկունին արեւմուտքովը Թոքատ հասայ: Պզտիկ ու աննշան քաղաք մը չէր առիկա հարկաւ որին նկատմամբ կարելի չըլ-լար ըսելիք երկու բառ կամ խօսք ունենալ: Ժամը ութին մօտայ քաղաք, ջինջ ու զուարթ օր մը, զոր Վեհ. Կայսեր ծննդեան երջանիկ տարեդարձին առիթովը շողողուն ու առաւելապէս պայծառ գիշեր մըն ալ փակեց:

Առաջին գործն կ'ըլլայ թղթատուն հոն-գիտիլ, մինչեւ հոս իմ միամիտ Նօթերս Մասիսին հասցնելու համար:

Ու յանկարծ ալէկ տառնին միտքս կ'իյ-նայ իմ հեռուի բարեկամս՝ Գաղանձեանը, որը պէտք էր տեսնել:

Յովհաննէս Գաղանձեան — գաւառացի աս ծանօթ բանասէր — իր անձնական թղթակ-ցութիւններովն ու գրուածքներովը հեռուէն կրցած էր համոզումը կազմել տալ իմ մէջս՝ հաղաւաղէպօրէն աշխիւ, ու շատ համեստ մարդու մը, որուն գրիչն ու ոճը զաւգալ ու անհեթեթ խիզախութիւններ պարունակէէ հեռի, մեղմ ու արամաբանուած չեղտեր ու նին զորս սակայն այնքան բնականօրէն կըր-ցած է ուժկու եզրակացութիւններով վեր-ջացնել:

Իր իսկ տունին մէջ կը հարկադրէ իս գի-շեր մը մնալ, ու մինչեւ իսկ օր մը յետա-ձըղել ճամբարդութիւնս, որ տառն կը հաւ-տամ որ շատիկ մը ճանճարացուցի ու յոգնե-ցուցի զինքը պտտած ըլլալու համար դպրոց-ները, եկեղեցիները ու առաջնորդարանը որոնց մասին հետաքրքրուելու յայանի մո-լութիւնը ունիմ, ուր ալ ըլլան սակայն:

Վարժարանը՝ ուր տառնեակէն աւելի ու-սուցիչներու մօտ հաւաքուած են քանի մը հարիւր երկսեռ ուսանողներ, վստահօրէն կրնամ ըսել որ չի գտնուիր խարխուլ ու ամա-յացած այն զիւրքին մէջ, որ այնքան ցաւա-լիօրէն միակ արժանիքը եղած է մեր շատ մը

դպրոցներուն : Ասկայն ասիկա հոն պաշտօնավարողներուն քաջալիրանքի բաժին մը ըլլալուն հետ մէկտեղ՝ կը կարծենք որ ամուր հաւատքը ծնցնէ հոնտեղ ամէնուն մէջ , թէ վաղուան օրը չպիտի ունենայ երբեք իր տխուր ու անհաճոյ ըսելիքները , փայլուն ու ձեռք ձեռքի տրուած կրթասիրական դուրծունէութիւնէ մը ետքը :

Գէորգ Ծ. Վրդ. Իբրանոսեան— Գէորգեան ձեմարանի նախկին չրջանաւարտ — իբր Առաջն. փոխանորդ եւ Տեսուչ երկսեռ դպրոցներուն յարմարագոյն անձի մը յայտնի արժանիքները ունի արդէն , կը հաւատանք , մանաւանդ երիտասարդական առողջ իր աս օրերուն :

Անհունապէս գոհ ու շնորհակալ , գիշերանց հազիւ կարող կ'ըլլամ ինքզինքս ազատել Գաղանձեանի , ու Գաղսնիք Մոզուրքեանի իր ընկեր-հեղինակին ձեռքէն , ու կ'առանձնանամ իմ պանդոկս , առտունն պատրաստութիւններս տեսնելու համար :

Նոյեմբ. 6

Ճերմակ ու վար մաղուող ձիւնին հետ եւդոկիայէն կը մեկնիմ հաճելի տպաւորութիւններու ներքեւ : Յուրեղն մասներս կռտալ կը սկսին , ու տարածուող ձիւնի սաւանին մէջէն իրիս գետը — որ Ամասիայէն կը շեղի — օձի կապոյտ զիկզակ մը կը շինէ հեռուէն՝ հանդարտ ու անխռով :

Նոյեմբ. 7

Ձիւնը կը շարունակէ իր երգը , ու խռտաշունչ հովերը կը սուրան անշունչ ու գոսացած լեռներէն :

Կէս օրէն քիչ վերջը Սեբաստիան իր մերկութիւնը սկսաւ ցուցադրել : Ծառերէ ու դարունին բացուող ծաղիկներէն զրկուած այդ քաղաքը , հիմակ փչող հովին զիմացը հազիւ թէ մատի վրայ համրուելիք ուռիներ ու բարտիներ միայն ունի :

Նոյեմբ. 8, 9, 10

Երեք օր մնացի Սեբաստիայի մէջ Ու հիմակ որ մտադրած եմ հենց վաղը ճամբաս շարունակել դէպի Մալաթիա՝, տակաւին վեց օրի ուղեւորութիւն մը , կը զրեմ աս տողերը Աֆրօնեան-օթէլին մէջ , իմ սննեակս որին

թիւը չեմ յիշեր . ի՞նչ պէտք այսքան մանրամասնութիւններու , չէ՞ :

Պատուհանէս կը դիտեմ Ալիս գետը որ կը շարունակէ իր գնացքը , անխռով ու պարտիկ ալիքներու այդ կեանքը , որոնք ո՛չ կ'ոռնան ու ո՛չ ալ կը փշուրին :

Ամէն անգամ որ առիթը ունեցած էի Եփրատի վրայէն անցնիլ , կը սիրէի միշտ կենալ եզերքի՝ կակուղ աւազին վրայ ու դիտել անթարթ աչքերով ծանր շարժումները յաւերժական իր ջուրին : Ծովերուն ահարկունայումքը չունի սակայն , ընդհակառակը մեղմօրօր շարժումները կարծես այն կուրծքերուն ու բազուկներուն որոնց վրայ պզտիկ հանգիստ մը յաւիտենական երջանկութիւն մը կ'արժէ :

Ալիս՝ Եփրատ մը չէ , շատ , շատ աւելի պզտիկ , հետեւապէս փափուկ կակուղ իրան մը որ կրնաս սեղմել մինչիսկ թեւերուդ մէջ : Ահարկու չէ՞ք գտներ սակայն իմ սէրս գետերուն :

Խոշոր ու փայլուն չէնք՝ որ Ալիսի անցած գիծին վրայ կը բարձրանայ՝ Սեբաստիայի վարժարանն է : Մինակ վեր կ'եղլեմ սանդուխներէն : Ու տեսուչը բարեհաճութիւնը կ'ունենայ հատիկ հատիկ բոլոր դասարաններն ալ պատցնելու , ու առիթը ընծայել մէկ քանի դասերու ներկայ դանուելու : Կրօնիտէս քահանան որ ըսին վերջէն թէ Պ. Մարտիրոս Նալրանտեանի (Մ. Ն. Բնագէտ) եղբայրն է , Ս. Գիրքին վրայէն բարոյական դասեր կը հանէր իր աշակերտներուն , ուրիշ տեղ մըն ալ Անգլիերէն ու գրաբարի դասեր որոնց մտիկ ընել տալու ազնուութիւնը կ'ունենան ինծի : Իբր դպրոց՝ Սեբաստիայի Ժողովուրդին շինած չէնք պարզապէս կը գերազանցէ բոլոր միւս գաւառայինները : Թէ չէնքին յարմարութեան ու տիրող կարգկանոնութեան հետ մէկտեղ՝ դպրոցը իր ծրագրովն ու երկսեռ վարժապետներովը լաւ վիճակի մը մէջ է անպատճառ , ատիկա չեմ կրնար պնդել , կրնամ վեր ասնել սա կէտը թէ աս մարդիկը քանի որ ստակ ու տրամադրութիւն ունեցած են հիմնելու հիւանդանոց մը՝ որ իր մաքրութեամբն ու ամէն կողմերովը Պօլսի հիւանդանոցին մէկ պզտիկ ընկերը կրնայ սեպուել ,

որբանոց մը որ հաւասար արժանիքներ ունի, ինչո՞ւ նաեւ չպիտի կրցած ըլլան ուսուցչական լաւ խումբի մը ընտրութիւնովը օժտած ըլլալ վարժարանը : Հիւանդանոցը երեսուն մահիճ ունի իր մէջ, ինչպէս նաեւ դեղարան մը : Առայժմ հազիւ թէ տասը հիւանդներ կային հոն : Որբանոցը մայր եկեղեցիին մօտերն է : Երիտասարդ գրող մը՝ Միհրան Իսպիրեան, ընդհանուր տեսուչն է հոն, որ նաեւ հաճեցաւ գործնականօրէն վեր առնել Որբանոցին նկատմամբ շատ մը դնահատելի մանրամասնութիւններ : Օտապաշեան վարդապետը գիշերը դացած էր :

Ու վաղը առտու որ պիտի բաժնուիմ Սեբաստիայէն բոլոր լաւ տպաւորութիւններու հետ, վիշտը ունիմ Տէր Վարդան քահանայ Արքայեանը տեսած չըլլալու, որին պիտի յանձնէի Մանչեսթրի հայ վաճառականներու պատկերը՝ պզտիկ ճպտի մը հետ, Ա. Յարութիւնեանէն, եւ Վօլթէի ու Գ. Կոստանդեանի արձանիկները Մ. Նուպարեանի կողմէն, իսկ ես պիտի տայի իմ կողմէս 1900ի Բիւրակներուն 1, 2, 3 թիւերուն մէկ հաւաքածոն :

ԽՈՍՐՈՎ ՔԵՇԵՇԵԱՆ

ԱՇՈՒՆ

Սիրուած անձ մը երբ մեկնի, անոր բացակայութեան դադափարը երազի մը պէս կուգայ մեզի, օրեր պէտք կըլլան համոզելու համար թէ այդ տխուր բաժանումը իրականութիւն մը ըլլայ : շատ անգամ կը կարծենք թէ դեռ հոս է ան, մեկնողը, մինչեւ որ մեկնումին դադափարը անդրադառնալով ու անդրադառնալով մեր ուզեղին մէջ՝ վերջապէս դրօշմուր հոն ամրապէս :

Ճիշդ այսպէս ահա, ես ալ չէի ուզեր համոզուիլ թէ ամառը՝ իր վճիռ կապոյտովը, իր գաղջ գիշերներուն հմայող լուսնակովը՝ առանց իմաց տալու, առանց «ես կերթամ կոր» ըսելու անձայն անչուկ մեկնած ըլլայ բոլոր ազուր բաներուն պէս : Այնպէս է սակայն, չունի է : Այսօր համոզուեցայ այնպէս ըլլալուն, կամայ ակամայ :

Իրիկուան դէմ՝ ձի նստեր էի, երթալ սոսիօրական պտոյտս ընելու համար դաշտերուն մէջ, Կայարան տանող խճուղիին վրայ, քաղաքին շէնքերէն դուրս ելլելուս պէս, դիմացէն, դաշտին մէջէն, կծու հով մը եկաւ խայթեց դէմքս — աչնան պաղ, անտառէս շունչը, որ դաշտերը գրաւած է արդէն եւ քաղաքին մէջ ալ պիտի թափանցէ կամաց կամաց, իր յամր բայց անյողգող յառաջիտաղացումին մէջ առջեւէն քշելով ամրան աղուոր օրերը :

Ճամբան երկու կողմի թուփերէն չոր տերեւներու անձրեւ մը կը տեղայ : Խեղճ տունկեր : Դեռ քանի մը շաբաթ առաջ հասարակաց պտոյտի տեղ մին էր այս օրուան ամայի ճամբան : Թուփերը որչափ առեն որ ազուր էին, կանանչ էին, տերեւներ ունէին, մարդիկ կուգային, կը դիտէին, կը հիւանային, կը սիրէին դիրենք, բայց հիմա, հիմա որ ա՛լ իրենց հմայքները, արդուգորդը մերկացած են, հիմա որ չոր ձիւղեր միայն ունին ցուցադրելիք, քովերնին անգամ չեն մօտենար . . . ապերախանքը, կը լքեն զիրենք — կիներու պէս՝ որոնց շուրջը բերասւորներ կը քծնին կը շողոքորթեն, կը մեծարեն որչափ առեն որ ազուր ու գեղեցիկ են, քայց յետոյ, երբ ծերանան, երբ աղեղնան, երեսին նայող չըլլար :

Դաշտերը, թէեւ շատոնց իրենց արգանքին պտուղը մարդուն ամէնակուլ ձեռքին յանձնած, դեռ հմայիչ էին սակայն, ժպիտ մը ունէին — գործ մը զլուսն հանած մարդու մը գոհունակութեան ժպիտը : այդ ժպիտը չկայ այսօր, մարեր է : Թախծոտ խորշումներու սկզբնաւորութիւն մը կայ անոր տեղ՝ որ հեռզնաէ պիտի շատնայ, մինչեւ որ վերջապէս ճերմակ մազերուն պսակը դայ պատկառելի պարզութիւն մը ցանել հոն :

* * *

Վեր կը նայիմ : Վճիռ կապոյտին վրայ գորշի ու ճերմակի խառնուրդ անթափանց, թանձր ծեփ մը զարկեր են, այնպէս որ այդ անծայրածիր ձեղունը քիչ մը աւելի մօտեցեր է մեզի, դէպ ի վար իջեր է : Այո՛, չեմ խաբուիր, անդին յեռներուն դադաթները ամպերու մէջ կորսուած են : Խորհրդա-

ւոր բան ասիկա, չքե՛ղ. արդեօք սա ամենի զորչ ամպերը իրօք վա՛ր իջած են, թանձր խաւերով, իրենց ծոցին մէջ պահելու համար կատարները այդ տիտաններուն՝ թէ անոնք, հրաբուխներու փոխուած յանկարծ, ծուխի հսկայ ամպեր կ'արձակեն օդին մէջ, այնքան առատ կերպով որ մինչ մէկ մասը ամպերուն կերթայ խառնուիլ, միւս մասն ալ վիթխարի պլորքներով դէպ ի վար իրենց կողերուն վրայ կը թափի։ Չեմ գիտե՛ր. հայայի բաներ տեղի կունենան կարծես հոն, այդ ամպէ քողին տակը՝ զոր առտու մըն ալ, բնութեան մէկ քմահաճոյքովը ու եղանակին փոփոխումովը, յանկարծ պիտի մէկդի ընեն արեւուն տակ շողացող խաղցողցիչ ճերմակ հագուստներնին ցոյց տալու համար մեզի, մեր հիացումը գրաւելու համար — ինչպէս չքեղօքէն զարդարուած թատերարեմի մը վարագոյրը վեր կը քաշուի յանկարծ անտեսանելի ձեռքէ մը, հանդիսականներուն հիացումի բացազանչութիւններուն մէջտեղ։

Ամառուան թեթեւ վերարկուս չկրնար արգիլել այդ կծու հովը մինչեւ մարմինս թափանցիլէ, եւ սակայն տեղի չեմ տար. ձին կը խթեմ, petit galopին օրօրող տատանումներովը տաքնալու, հակազդելու համար ցուրտին, ու ճամբաս կը շարունակեմ, ճակատս հովին, սիրուն ու վէս կորութիւն մը առած պարանոցին վրայի սեւ բաշին ալեւծուի տատանումը դիտելով։ Կայարանին անկիւնը հասնելուս սակայն, հեռուէն անցնող կառքերու խուլ զրրիւնին պէս բաներ մը կը լսեմ զլուսս վերելի ամպերուն մէջէն եւ, թը՛ր, թը՛ր ջուրի ցանցառ կաթիլներ կը սկսին լոյնալ։ Մե՛ղք, պտոյտիս էն ազուոր մասը — ամայի դաշտերու թափառումս — պիտի ուտէ անձրեւը։ Սանձը կը քաշեմ կաւայ ահամայ, եւ, դառնալուս պէս, ուշիմ կենդանին, վայրկեան մը առաջ տուն մտնելու պէտքը ինքն ալ զգացած արդէն, առանց իմ ազդարարութեանս սպասելու, անզուսպ եռանդով մը կը սուբայ։ Գիտիմ, արագ արթնանալով մը կը փախչի օտքերուս տակէն, ձիուս օտքերուն ջրուտ հարուածներուն տակ կը փլչի կարծես ու կենդանին ամէն մէկ

խոյանքը՝ պրծելու ճիգ մըն է իր ետեւ բացուող անզունդի մը եզերքէն։

Տուն հասնելուս, դեռ հագիւ թէ լրջօրէն տեղադու տրամադրութիւն կը ցուցնէ անձրեւը։

Հիմա պատուհանիս ապակիները կը հարուածէ ան՝ քմահաճ հովին խորագանի հարուածներով զրգռուած — կից տուող ձիւ մը պէս։

Դուրսը, սարսռացնող, թանձր մութ մը կայ. երկնքին սլալացող սիրուն լապտերներն ալ գացեր մէկիկ մէկիկ մարե՛ր է աշունը — սա բնութեան չփայցած զաւակը որ տարուան միւս երեք եղանակներէն աւելի կը սիրուի, կարծես, իր մօրմէն, հիւանդ աղու մը պէս որուն ամէն բան կը ներուի։

ՓՍՅԱՍԿ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԷՍ

Կիրակի օրը. Օրթագիւղի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Պ. Էտկառ Տիւմէնցի պսակադրութիւնը Օր. Զարուհի Շիշմանեանի հետ, զուսար Զարեհ էֆ. Շիշմանեանի, Երկու կողմի ազգականներէն զատ, ներկայ էին բազմաթիւ հրաւիրեալներ՝ համակիր բարեկամներ ու ծանօթ ընտանիքներ որոնք փութացած էին անձամբ յայտնել իրենց խնդակցութիւնն ու շնորհաւորանքը երիտասարդ ամուլին ու անոնց ծնողաց։ Տաճարը չքեղապէս զարդարուած ու լուսաւորուած էր, եւ արարողութեանց կը նախագահէր Անտօնեան Միաբանութեան արքահայր Հ. Ռափայէլ Ծ. Վրդ. Միստէրեան, Հանդիսադիրն էր Հ. Բարսեղ Ծ. Վրդ. Չնտօյեան, եկեղեցիին մեծաւորը, որ կատարեց պսակադրութիւնը։

Կնքահայրութիւնն ստանձնած էր Շոդեհնաւային Բագէ Ընկերութեան, — որուն գլխաւոր պաշտօնեաներէն է փեսան, — Կ. Պալսոյ ընդհ. գործակալ Պ. Ռեպուլ որ անձամբ եկած էր՝ նոյն ընկերութեան պաշտօնէութեան հետ, որոնք այս օրթիւ համակրանաց ջերմագին արտայայտութիւններ ըրին իրենց պաշտօնակցին ու շնորհայի հարսին։ Եկեղեցական արարողութիւններէն ետք, հարսնեւորներն հրաւիրուեցան վարժարանին սրահը ուր արժանաւոր մեծարանքներ ընծայուեցան եւ շնորհաւորութիւններ եղան։

ԳԵՐՄԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼԱՌԻՐԵԼԼԱ

Վ. Է. Պ. ԲԱՌԻԼ և Ս. ՅԶԷԻ

Թիւ 5

Աղջիկը կոնք մը գտաւ ու վերքերը նորէն լուաց , բան մը որուն Անթոնինօ համբերեց ազու մը պէս : Յետոյ Լաուրէլլա վերքին վրայ դրաւ խոտին բուժիչ տերեւները , որոնք անմիջապէս մեղմացուցին վերքին կոտտալը , եւ կապեց ձեռքը կտաւի նուրբ երիզներով զորս իր հետը բերած էր : Երբ գործողութիւնը վերջացաւ , երիտասարդը ըսաւ .

— Շնորհակալ եմ . եւ եթէ կ'ուզես ինծի հաճոյք մըն ալ պատճառել , ներքէ ինծի , որ այսօր այդպիսի յիմարութիւն մը ծագեցաւ գլխուս մէջ , ու մոռցիր այն ամէն բաները՝ զորս ես ըսի ու ըրի : Ես ինքս ալ չգիտեմ թէ ի՞նչպէս պատահեցաւ : Դուն այդ բանին բնաւ տեղի չտուիր , ճշմարիտ չտուիր : Ու ասկէ վերջը՝ ա՛լ ինձմէ չպիտի լսես բան մը որ կարենայ քեզի վիշտ պատճառել :

— Ե՛ս պէտք է քեզմէ ներում խնդրեմ , ընդմիջեց աղջիկը : Պէտք էր որ ես ամէն բան քեզի ներկայացնէի ուրիշ կերպով ու աւելի լաւ , ու քեզ չորրբոքեցնէի իմ համր ձեւովս . եւ մինչեւ իսկ երբեք վէրք . . .

— Այդ անհրաժեշտ էր , ու ճիշդ ալ ժամանակը , այնպէս որ ես վերստին տէր եղայ իմ բանականութեանս : Եւ ինչպէս ըսի արդէն , ատիկայ նշանակութիւն չունի : Ներելու մասին մի՛ խօսիր . դուն ինծի բարիք դործեցիր , ու ատոր համար շնորհակալ եմ քեզի : Հիմա՝ ա՛լ գնա քնացիր , եւ ահա՛ , ահա հոգ է քու թաշկինակդ զոր կրնաս հետըդ տանիլ :

Երիտասարդը անոր երկնցուց թաշկինակը բայց ան կանգնած կը մնար դեռ , ու այնպէս կ'երեւար թէ ինքն իրեն հետ կը մաքառի : Վերջապէս ըսաւ .

— Իմ պատճառովս քու թիկնոցդ ալ տուժեցիր , ու ես գիտեմ որ նարինջներուն

ստակը անոր մէջ կը գտնուէր : Ծաւրան էր որ առաջին անգամ այս ամէնը ինկաւ միտքս : Ես իսկոյն չեմ կրնար փոխարինել , որովհետեւ չունիմ , ու եթէ ունենամ ալ , այն ալ մօրս կը պատկանի : Բայց ահա ունիմ արծաթ խաչ մը զոր նկարիչը ինծի համար գրաւ սեղանին վրայ , երբ վերջին անգամ մեզի էր : Ես անկէ ի վեր անոր նայած չեմ ու չեմ ալ կրնար երկար ատեն սնտուկի մէջ պահել , եթէ դուն ծախես դայն — ան ապահովաբար քանի մը դահեկան կ'արժէ , կ'ըսէր այն ատեն մայրս — այն ժամանակ կը փոխարինուի քու մընսդ , եւ ինչ որ պակսելու ըլլայ , ես կ'ուզեմ հատուցանել մանելով , գիշերները , երբ մայրս կը քնանայ :

— Ես բան մըն ալ չեմ ընդունիր , պատասխանեց երիտասարդը կտրուկ կերպով ու ետ մղեց ձեռմակ խաչը զոր աղջիկը հանած էր գրպանէն :

— Պէտք է ընդունիս , ըսաւ Լաուրէլլա : Ո՛վ գիտէ , որչափ ատեն չես կրնար աշխատիլ այս ձեռքովդ , Հոն կը գտնուի ահա , ու ես երբեք չեմ ուզեր իմ աչքերովս դայն նոսրէն տեսնել :

— Ուրեմն ծովը նետէ :

— Բայց նուէր մը չէ զոր քեզի կ'ընեմ : Ատիկայ ուրիշ բան չէ եթէ ոչ քու արդար իրաւունքդ որ քեզի կը վերաբերի :

— Իրաւունք , ես երբեք իրաւունք չունիմ քու եւ է մէկ առարկայիդ վրայ : Եթէ ապագային անգամ մը ինծի հանդիպիս , ինծի չնայելու բարեհաճութիւնը ունեցիր , որպէսզի չմտածեմ թէ ինձ կը յիշեցնես այն բանը որու մասին ես քու առջեւ յանցաւոր եմ : Եւ հիմա , գիշեր բարի , ու թո՛ղ այս վերջինը ըլլայ :

Անթոնինօ կողովին մէջ դրաւ թաշկինակը , խաչն ալ վրան , ու յետոյ դոցեց կա-

վարիչը : Երբ վերջը վեր նայեցաւ , աղջկան երեսը , սոսկաց : Արցունքի խոշոր ու գծրն դակ կայլակներ կը գլորէին անոր այտերն ի վար : Աղջիկը կը թողուր որ անոնք հոսին :

— Ս. Կոյս Մարիամ , աղաղակեց երիտաւորը , հիւսնդ ես արդեօք . կը դողաս կոր զլիւնդ մինչեւ ոտքդ :

— Բան մը չէ , պատասխանեց աղջիկը : Կ'ուզեմ տուն երթալ :

Ու տատանեցաւ դէպ ի դուռը : Արտասուելը յաղթահարեց անոր , այնպէս որ իր ճակատը սեղմեց դրան դէմ եւ ա'լ հեկեկաց բարձրաձայն ու բուռն կերպով : Բայց զայն ետ կեցնելու համար Անթոնինայի իր քով հասնելէն առաջ , աղջիկը յանկարծ ետ դարձաւ ու նետուեցաւ երիտասարդին պարանոցը :

— Ես չեմ կրնար համբերել , աղաղակեց Լաուրէլլա , ու երիտասարդը իր մարմնոյն վրայ սեղմեց , ինչպէս մահամերձ մը կեանքին կը կապի , ես չեմ կրնար լսել որ դուն ինծի անոյշ խօսքեր ըսես ու հրամայես որ քեզմէ հեռանամ : ամբողջ յանցանքը խզծիս վրայ : Զիս ծեծէ , զիս ոտքերուդ տակ առ , անիծէ զիս . . . — Կամ եթէ ճշարիտ է թէ դուն զիս կը սիրես դեռ , այն բոլոր չարիքներէն ետքը՝ զորս քեզի հասցուցի , ա՜նա՛ առ զիս ու պահէ ու ըրէ ինչ որ կ'ուզես . բայց զիս քովդ տպակէս մի՛ վաճառե . . . —

Նոր , բուռն հեկեկանք մը ընդմիջեց աղջկան խօսքը : Վայրկեան մը երիտասարդը անբարբառ պահեց զայն իր թեւերուն մէջ :

— Եթէ դեռ քեզ կը սիրեմ , աղաղակեց վերջապէս : Ս. Աստուածամայն , կը կարծես թէ իմ սրտիս բոլոր արիւնը հեռուցած է այն փոքրիկ վէրքէն , չե՞ս զգար կուրծքիս մէջ անոր բաբախումը , իբր թէ ուղէր դուրս ելել ու քեզի գալ : Բայց եթէ դուն ասիկայ կ'ըսես զիս փորձելու համար եւ կամ որովհետեւ կը կարեկցիս ինծի , այն ժամանակ գնա՛ , ու ես կ'ուզեմ ա՛ս ալ մոռնալ : Պէտք չէ որ մտածես թէ ինծի պարտական ես , որովհետեւ գիտես թէ ի՞նչ կը զգամ քեզի համար :

— Զէ , պատասխանեց ան հաստատ , ու աղուն ուսերէն վեր նայեցաւ սրտագին , գէպի անոր երեսը , արտասուածորմ աչքերով , ես կը սիրեմ քեզ , եւ եթէ այս բանը հիմա

կ'սեմ , պատճառն այն է որ կը վախնայի երկար ատեն ու այդ պատճառաւ ալ կը խորխտայի : Բայց հիմա կ'ուզեմ ուրիշ մը ըլլալ , որովհետեւ ա'լ չեմ կրնար համբերել քեզի չի նայելու , երբ ճամբուն վրայ առջեւ անցնիս : Հիմա կ'ուզեմ նաեւ քեզ համբուրել , ըսաւ աղջիկը , որպէս զի կարեւորաւ ըսել , եթէ դարձեալ տարակոյսի մէջ գտնուիս , թէ ան զիս համբուրեց ու Լաուրէլլա ոչ մէկը կը համբուրէ , բայց միայն զայն՝ որ իբր ամուսին կ'ուզէ իրեն :

Լաուրէլլա երեք անգամ համբուրեց նաւաւորը , եւ յետոյ ինքզինքը ազատեց անոր բազուկներուն մէջէն ու ըսաւ .

— Գիշեր՝ բարի , սիրելիս , գնա հիմա քնացիր ու բժշկէ ձեռքդ , ու իմ հետս մի գար , որովհետեւ ես միայն քեզմէ կը վախնամ :

Յետոյ դռնէն դուրս սլացաւ ու աներեւութացաւ պատերուն ստուերներուն մէջ : Բայց Անթոնինոյ դեռ երկար ատեն պատուհանէն դիտեց ծովը որուն վրայ կը թուէին դողդղալ երկնքին լոյսերը բոլոր :

* * *

Երբ հայր Քուրաթօն վերջին անգամ հեռացաւ խոստովանցնելու աթոռէն որուն վրայ Լաուրէլլա ծնրադբած էր երկար ատեն , մեղմիւ ժպտեցաւ ինքնիրեն : Ո'վ կրնար մտաբերել , կ'ըսէր ինքնին , թէ Աստուած այսչափ շուտ պիտի գթայ այս հրաշալի սրտին վրայ : Ու դեռ ինքզինքս ալ կը յանդիմանէի թէ աւելի խստութեամբ սաստած չէի ինքնահաճութեան դեւը : Բայց մեր աչքերը կարճատես են Աստուծոյ ճամբաներուն համար : Հիմա Աստուած թո՛ղ օրհնէ Լաուրէլլան ու ինծի ալ կեանք տայ որ Լաուրէլլայի անդրաւնիկ օրդին անգամ մը , իր հօր տեղ , զիս առաջնորդէ ծովուն վրայ :

ԿԱՐԻՆ

Գերմաներէնէ թարգմանեց

Սանասար Վարժ.

Վ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՏՈՒԳ ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

կը ծանուցանէ թէ բնակութիւնը Թաղսիմ փողոց , թիւ 3 տունէն փոխադրած է նոյն փողոցը թիւ 23 տունը , եւ հիւանդ կ'ընդունի ըստ առաջնոյն՝ Հինգշաբթիէն զատ ամէն օր ժամը 7—10 (Ը. Թ.) :

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայրը կիրակի իրիկունս կայս. Պալատ երթալով, ներկայ գտնուեցաւ Իֆթարի սեղանին եւ այս առթիւ իր հաւատարմական զգացումներն յայտնեց՝ արժանանալով Կայսերական մեծարանաց :

Երանունի Մայրապետ՝ որ արդէն կիսամեռ վիճակի մէջ էր, կաթուածահար եւ ուշադուրոյս անկողին ինկած ամիսներէ ի վեր, հոգին աւանդեց երկուշարթի իրիկունս, Գալֆայեան Որբանոցին հաստատման 36րդ տարեգարձին տօնման վաղայաջորդ օրը, — տիսուր զուգադիպութեամբ մը : Յուդարկաւորութիւնը կատարուեցաւ Խազդիւզի Ս. Ստեփաննոս եկեղեցին, Պատր. Փոխանորդ Սրբազանին նախագահութեամբ եւ մարմինը ամփոփուեցաւ գիւղին գերեզմանատունը :

Իրու է թէ Երանունի մայրապետին հիւանդութիւնը փրկութիւնը եղաւ իր վարած հաստատութեան, որուն նկատմամբ համակրանքի եւ հոգածութեան նոր հոսանք մը առաջ եկաւ՝ զայն անխնամ չի ձգելու համար : Բայց քիչ մըն ալ չափազանցութիւններ կային այն կծու քննադատութիւններուն մէջ որոնք անխնայ տեղացին այդ խեղճ կնոջ անուանի չուրջը, դեռ հազիւ մարմինը հող իջուցուած : Յարգանքի բաժին մը պարտական ենք իր յիշատակին, մանաւանդ իր տիսուր վախճանէն ետքը, վասն զի Երանունի մայրապետ՝ անուս բայց գործօն կին մը, տասներեք տարի անընդհատ վարեց՝ բարեյիշատակ Սրբունի մայրապետէն իրեն կտակուած Որբանոցը, միս մինակը կուրծք տալով նիւթական անձկութիւններու, մինչեւ որ հարկ եղաւ այդ աւանդը յանձնել Պատրիարքարանին եւ անոր կողմէ կարգուած Խնամակալներուն որոնց պիտի աջակցի հիմայ Տիկիններու խնամակալութիւն մը :

Կիլիկիոյ նորընտիր Կաթողիկոս Ամեն. Տ. Սահակ Սրբազան կերեւայ թէ Ծնունդէն ետքը պիտի կարողանայ մեկնիլ Երուսաղէմէն : Ն. Սրբազանութիւնը գրեք է Կիլիկիոյ Կաթողիկ. Տեղապահ Տ. Կիրակոս Սրբազանին

թէ, մինչեւ որ իրմէ լուր չ'առնէ՝ հրաւիրակները չ'մեկնին Ատանայէ դէպի Երուսաղէմ :

Ուսումնական Խորհուրդը յարատեւութեան եզական ոգի մը կը ցրեցնէ՝ կրթական տեսուչ մը ունենալու համար իր ղրմումները շարունակելով : Քաղ. Ժողովը իր վերջին նիստին մէջ նկատողութեան առնելով այդ նպատակաւ մատուցուած տեղեկագիր մը, Ս. Պատրիարք Հօր յանձնեց իր տեսութիւններն հաղորդել Ուսումն. Խորհուրդին :

Ս. Հայրապետը նամակ մը գրելով Զմիռնիոյ առաջնորդ Տ. Մելքիսեդեկ Արքեպս. ի, կը յայտնէ թէ՝ լսելով որ իր տկարութեան պատճառաւ մտադիր է հեռանալ առաջնորդական պաշտօնէն եւ վանք մը քաշուիլ, կը հրաւիրէ զինքը Ս. Հռիփսիմեանց վանքը : Մելքիսեդեկ Սրբազան դեռ որոշում տուած չէ : Միւս կողմէ իր տկարութիւնը կը շարունակէ եւ շատ օրեր անկողինը կը մնայ թէեւ այդ վիճակին մէջ կը զբաղի Առաջնորդարանի գործերով :

Էսկիեփնի Թաղ. Խորհուրդը յայտնելով որ իրենց նորաշէն եկեղեցին՝ Առաջն. տեղապահ Աղաւնունի Մկրտիչ Վ. ի եւ Համադասաք Բ. ի ջանքերով կառուցուած է, եւ նկատելով որ ժողովուրդը գոհ է թէ՝ տեղապահէն եւ թէ քահանայէն, խնդրեք են Ս. Պատրիարքէն Մկրտիչ Վ. ընտելախաչով եւ յիշեալ քահանան ծաղկեայ փիլոնով վարձատրել :

Բարիզի Արձանագրութեանց Ակադեմիային դեկա. 5 ի նիստին միջոցին Արեւելեան լեզուներու վարժարանին մէջ իբր Հայերէն լեզուի ուսուցիչ ներկայացուեցաւ հանգուցեալ նշանաւոր հայերէնագէտ Պ. Գառիէի տեղ՝ նախ Բարձր Ուսմանց Վարժարանին ուսուցչապետ Պ. Մէյեէ եւ յետոյ Պ. Մազլէր :

Գաւաիթօղեան Որբանոցին չինութիւնը պիտի սկսի յառաջիկայ գարնան, մինչեւ այն ատեն լրանալով օրինական բոլոր ձեւակերպութիւնները :

Արժանատի Կ. Ս. Իթիփիճեան

Տպագրութիւն Գ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ֆիննանճըլար եօղաշու, Թիւ 27

ԱՊՐԻԿ ՎԱՅԱՌՈՒՄ

ՎԱՅԱՌԱՏՈՒՆ ՀԷՐՁԱՅԻ



ԱՊՐԻԿ ՎԱՅԱՌՈՒՄ
Յանսխորաց դիրտոբան
հայտը

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ

Եթե կուզե՞ք ամէն
տեսակ գոհարեղէններ
ունենալ՝ գի՛նեցէ՛ք


Կ. Պոլիս, Ոսկերչաց
Շուկայ մեծ փողոց թիւ 13

Հերձայի Վանաւասունը ունի եւրոպական
ճաշակով պատրաստուած գոհարեղէններ ,
ամէնքն ալ առաջնակարգ ըլլալու պայմանաւ :
Հերձայի Վանաւասան գիներն ամբողջի են :
Հերձայի Վանաւասունը ունի արծաթեղէն
առարկաներ :

Հերձայի Վանաւասունը ունի ժամացոյցներ
եւ արծաթեկայ գաւազաններ (պսակքով) :

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հարիւրն իսան կանիկ , միացեալին հա-
մար շարժեալիսն հարիւրն հինգ վճարում ,
կանիկի գնողին համար 100ին 5 գելլ :
Գործածուած գոհարեղէններ՝ եթէ վնաս-
ուած չեն՝ 100ին 10 գելլով եւս կանուակն :



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի
մեքենայի մնայ , բայց էական կէտն է լաւ մեքե-
նայ մը ունենալ , որովհետեւ լաւ մեքենայ մը
անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ
դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է :
Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

(ՀԱՅՔԱՅՔԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ)

The Singer, Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեխանաներ
կը գտնուին :

ՍԻՆԿԷՐԻ մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառա-
տանց մէջ՝

ԲԵՐԱ

1. Մեծ փողոց , Պօն Մառչէի դէմ , թ. 343 եւ 343 կրկին .
2. Մեծ փողոց , Կալաթա Սէրայի Լիսէին դէմ .

ԿԱԼԱԹԱ

1. Սինկէր խան , Թիւնէլին ետեւը .
2. Գարաբէօյ , Թրամվէյին կայարանին դէմ .

ՊՈԼԻՍ

1. Սուլթան Համամ , թիւ 2 .
2. Սուլթան Պէյազիտ , Թրամուէյի կայարանին դէմ , թ. 13

ՍԿԻԻՏԱՐ

Զարը Պօյու , թ. 120 .

Դասերը եւ նորոգութիւնք ձրի .

Կասարեալ երաւսաւորութիւն

Մասնանիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս , Մեծ փողոց ,
թ. 343 եւ 343 կրկին , Սարգիս պէյ Տիւզդուլուի տունը :

ԵԳԵՍՏՈՍՅՈՒՆԻ ՊԵՂՈՍՊԵՏ

ԿԱՂԱՆԻՒ ԱՌԹԻՒ

Ուսանողներու և զարգացեալներու համար Կաղանդի
իբր օգտակար նուէր կը յանձնարարենք
Տոբթ. Տաղաւարեանի գործերէն .

ԱՌՏՆԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ընկիւր բուդի վրայ, մասնաւոր սպագրութիւն, փառակազմ
Գին 35 դր.

L'UNIVERS ET SA FORMATION

Գին 10 դր.

ԾԱԳՈՒՄՆ ՀԱՅ ՏԱՌԻՑ

Գին 10 դր.

Նոյնպէս՝ յանձնարարելի են հետեւեալ գիրքերը՝
իբր գրեւնական նուէր Կաղանդի .

ԿԻՆՆ ԻԲՐԵՒ ՕՐԻՈՐԴ ԶԷՐՄԱՆ ՔԼԷՆՔԷԻ

Թարգմ. Մ. Կ. ՆԱԶԻԿԵԱՆ

Գին 10 դր.

Նոյն հասորը՝ փառակազմ Գին 15 դր.

ԲԱՌԱԳԻՐՔ ՖՐԱՆՍԵՐԵՆԷ-ՀԱՅԵՐԵՆ

ԿՈՄԻՏԵԱՍ ՈՍԿԵԱՆԻ

Գին 25 և 27 դր.

Սոյն բոլոր գիրքերը, Մատթէոսեան տպարանէն հրատարակուած , կը վաճառուին
Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ Թղթավաճառանոցը, Ֆինանսըլար եօդուշու, Կ. Պոլիս :



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667 Ֆրանք
1901 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ ու տոկոս	54 000 000 »
Երաշխաւորութեան գումար	122.000.000 »
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400.000 »

Կեդրոնասեղի, Ղալաթիոյ փառափին վրայ, Մաքաւան հին սեղը
Ընդհ. Բնակչ.
Ա. ՀԻՒՐՄԻՒԶ ԹԵՌՑՈՐ ՌԷԲԷՆ